

Հայաստան

Սեպտեմբեր, 2021 թ.

Փախստականների հարցով գլոբալ համաձայնագրի ներքո ՄԱԿ ՓԳՅ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը փախստականների պաշտպանության մեխանիզմների, ապաքաղաքացիությանը վերաբերող քաղաքականությունների բարելավման և համապետական բարեփոխումներում փախստականների ներգրավման գործում:

Լեռնային Ղարաբաղ (ԼՂ). ՄԱԿ-ի գործընկեր այլ գործակալությունների հետ համատեղ ՄԱԿ ՓԳՅ-ն մարդասիրական օգնություն է տրամադրում **փախստականների իրավիճակում գտնվող անձանց**, որոնք տեղահանվել են Լեռնային Ղարաբաղից և բնակվում են Հայաստանում:

Միջգործակալական արձագանքում. ՄԱԿ-ի մշտական համակարգողի և ՄԱԿ ՓԳՅ-ի համատեղ ղեկավարությամբ Հայաստանում ՄԱԿ-ի թիմն իրականացնում է **Միջգործակալական արձագանքման ծրագիրը**, որի վերջին զեկույցը հասանելի է տվյալների պորտալում:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏԿՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ*

Փախստականներ	3,366
Ապաստան հայցողներ	151
Փախստականի իրավիճակում գտնվող անձինք**	104,551
Քաղաքացիություն չունեցող անձինք	1,000
ԸՆդամենը	109,068

**Ներառյալ Սիրիայից և ԼՂ-ից ժամանակ փախստականի իրավիճակում գտնվող անձինք:

ՆԱԳԱՆ ԵՐԵՔ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԿՐՆԵՐ*

Փախստականներ	Ապաստան հայցողներ
Աղբբեջան 1,215	Իրան 51
Իրաք 1,086	Կուբա 9
Սիրիա 741	Հնդկաստան 5

Տվյալների աղբյուրը. ՀՀ կառավարություն և ՄԱԿ ՓԳՅ «Գլոբալ միտումներ» 2020 թ. զեկույց:

COVID-19-Ի ԿԱՆԽՈՒՄԸ ԵՎ ԴԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

Շահերի պաշտպանություն. ՄԱԿ ՓԳՅ-ն ԱՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ ջատագովում է պատվաստման ազգային ծրագրում մտահոգության ներքո գտնվող անձանց ներառման համար, այդ թվում՝ անհատական խորհրդատվության և ուղղորդման միջոցով:

Հաղորդակցություն համայնքների հետ. Հյուրընկալող համայնքների և մտահոգության ներքո գտնվող անձանց հետ ՄԱԿ ՓԳՅ-ի համագործակցությունը շարունակվում է կանոնավոր դաշտային այցերի և թեժ գծի ծառայություն մատուցելու, ՄԱԿ ՓԳՅ Հայաստանի գրասենյակի **Ֆեյսբուքյան էջի**, «Տեղեկատվություն Հայաստանի փախստականներին» տելեգրամային ալիքի, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՅ Հայաստանի «Help» վեբկայքի գործարկման միջոցով:

Կանխարգելում. ՄԱԿ ՓԳՅ-ն և գործընկերները տարածում են COVID-19-ի կանխարգելման վերաբերյալ ԱՀԿ-ի տեղեկատվական թերթիկները և պաստառները, քաղաքապետարաններին և ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց բաժանում են դիմակներ և այլ պաշտպանիչ պարագաներ:

ՇԵՆՏԱԴՐՈՒՄՆԵՐ

Պաշտպանության մոնիտորինգ

2021 թ. հունվարից մինչև սեպտեմբեր 10,880 մարդու հետ հարցազրույց է անցկացվել. [զեկույցը հասանելի է այս հղումով]: 4,243 մարդ անհատական օգնության կամ հասանելի ծառայությունների է ուղղորդվել:

Թեժ գծի գործարկում

2021 թ. օգոստոսին՝ մտահոգության ներքո գտնվող անձանց հետ հաղորդակցության հետեւողական ուղի և հետադարձ կապի մեխանիզմ ապահովելու համար՝ առաջնորդվելով տուժած բնակչության նկատմամբ հաշվետվականության սկզբունքով:

Խաղաղ համակեցության ծրագրեր

Են սկսել գործել Հայաստանում: Սյունիքի մարզում տեխնիկական օժանդակություն է տրամադրվել **երկու համայնքապետարանի և հինգ համայնքային կազմակերպության**: Սիսիան և Գորիս քաղաքներում մեկնարկեց մանկական խաղախրապարակներով համալրված երկու մարզադաշտերի շինարարությունը:



Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղահանված ընտանիքների դպրոցահասակ երեխաներ
ք. Աբովյան, Կոտայքի մարզ, 2021 թ. հունիս
Լուսանկարը՝ © ՄԱԿ ՓԳՅ/Անահիտ Հայրապետյան

Առանցքային գերակայություններ

- **Պաշտպանություն.** ՄԱԿ ՓԳՅ-ն շարունակում է մասնագիտական աջակցություն ցուցաբերել Կառավարությանը՝ փախստականների եւ տեղահանված անձանց համար միջազգային չափորոշիչների համահունչ եւ տեւական լուծումներ գտնելու նպատակով:
- **Տարածքի հասանելիություն.** ՄԱԿ ՓԳՅ-ն կանոնավոր կերպով մշտադիտարկում է մուտք գործելու անցակետերը՝ ապահովելու ապաստան հայցողների անարգել մուտքը ՀՀ տարածք, աջակցում է ազգային հզորությունների զարգացմանը եւ օժանդակում սահմանապահների ու անցակետերի աշխատակիցների համար փախստականների իրավունքի դասընթացներին ինստիտուցիոնալ կարգավիճակ տալուն:
- **Ապաստան.** ՄԱԿ ՓԳՅ-ն եւ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն իրականացնում են ապաստանի տրամադրման վարչական եւ դատարարական ընթացակարգերի մշտադիտարկում, աջակցում կառավարությանը՝ ապաստանի ընթացակարգերի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- **Համայնքների հզորացում եւ ինքնաբավություն.** ՄԱԿ ՓԳՅ-ն իր մտահոգության ներքո գտնվող անձանց նպատակային օժանդակություն է տրամադրում՝ նրանց ինտեգրմանը նպաստելու նպատակով: Սոցիալ-հոգեբանական, իրավաբանական եւ բժշկական օժանդակության հետ մեկտեղ՝ փախստականներն օգտվում են նաեւ մասնագիտական վերապատրաստման եւ լեզուների ուսուցման դասընթացներից, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավման նախագծերից: Համագործակցելով «MADE51»-ի հետ՝ տեղահանված կին ձեռներեցները զբաղվում են ավանդական արհեստագործությամբ եւ դիմակների արտադրությամբ:

Աշխատանք գործընկերների հետ

- ՄԱԿ ՓԳՅ-ն համագործակցում է պետական եւ ոչ պետական շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ Միգրացիոն ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հանրային պաշտպանի գրասենյակի, ճյուղային նախարարությունների եւ դատական համակարգի, խորհրդարանի, ոստիկանության, մարզպետարանների եւ համայնքապետարանների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվամիջոցների եւ ակադեմիական շրջանակների հետ:
- **Արտաքին հարաբերություններ եւ հաղորդակցություն համայնքների հետ.** Հիմնական գործողությունները ներառել են մտահոգության ներքո գտնվող անձանց ծանր վիճակի եւ նրանց առջեւ ծառայած մարտահրավերների վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացումը, նրանց կրթումը սեփական իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ, այդ թվում՝ վերջերս ստեղծված ՄԱԿ ՓԳՅ «HELP Հայաստան» վեբկայքի միջոցով:

Արձագանքում Լեռնային Ղարաբաղի ճգնաժամին

- 2021 թվականի հունիսի դրությամբ՝ Հայաստանում **փախստականի իրավիճակում գտնվող անձանց** թիվը կազմել է **36,989**: Նրանց գերակշիռ մեծամասնությունը կանայք եւ երեխաներ են:
- ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի հետ համատեղ՝ ՄԱԿ ՓԳՅ-ն ղեկավարում է 2020 թ. սեպտեմբերին վերսկսված գինված հակամարտության հետեւանքով ԼՂ-ից տեղահանված անձանց մարդասիրական կարիքների արձագանքման գործողությունների **համակարգման մեխանիզմները**:
- ՄԱԿ ՓԳՅ-ն ներգրավված է **պաշտպանության մշտադիտարկման գործողություններում**, ներառյալ մեկնելու եւ վերադարձի մշտադիտարկումը, որպեսզի որոշարկի եւ արձագանքի Հայաստանի տարածքում գտնվող տեղահանված անձանց պաշտպանության կարիքներին:
- Առ այսօր, ԼՂ-ից փախստականների նման իրավիճակում գտնվող մոտ **10,709** մարդու ոչ դրամական աջակցություն է տրամադրվել հիմնական կարիքները հոգալու համար: Փախստականների նման իրավիճակում գտնվող մոտ **14 հազար մարդ** 2021 թ. հուլիսի մեկնազամյա դրամական աջակցություն է ստացել: ՀՀ իշխանությունների հետ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում **655 ընտանիք** ժամանակավոր կացարանից առանձին բնակարան տեղափոխվելու դեպքում բնակվարձի սուբսիդավորում կստանան:

Ապաքաղաքացիություն

- Հայաստանը միացել է ապաքաղաքացիության մասին երկու կոնվենցիաներին: Ապաքաղաքացիությանը վերջ դնելու ուղղված #IBELONG քարոզարշավի խթանման նպատակով ՄԱԿ ՓԳՅ-ն աջակցում է կառավարության ջանքերին՝ ուղղված ապաքաղաքացիությանն առնչվող իրավական քաղաքականությունների եւ ընթացակարգերի ընդունմանը:
- ՄԱԿ ՓԳՅ-ն աջակցում է քաղաքացիություն չունեցող անձանց համար 1954 թ. Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերի ներդրմանը, ինչը համահունչ է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության չափանիշներին:

ՄԱԿ ՓԳՅ-ի ներկայությունը Հայաստանում

Անձնակազմ.

31 տեղացի աշխատակից

8 միջազգային աշխատակից

Գրասենյակներ.


1 գրասենյակ Երեւանում

Ֆինանսական տեղեկություններ

(առ 2021 թ. սեպտեմբեր)

Ֆինանսական պահանջներ

15.4 ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ



ՄԱԿ ՓԳՅ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին՝ 2021 գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների եւ որոշակի նախապայմաններով տրամադրված ներդրումների համար: 10 մլն ԱՄՆ դոլար կամ ավելի նվիրաբերած դոնորները.

Նորվեգիա | Շվեդիա | Իսպանիա, մասնավոր դոնորներ | Նիդեռլանդներ | Դանիա | Միացյալ Թագավորություն | Գերմանիա | Ճապոնիա | Իտալիա, մասնավոր դոնորներ | Ֆրանսիա | Կորեայի մասնավոր դոնորներ | Շվեյցարիա | Ճապոնիա, մասնավոր դոնորներ | Իռլանդիա | Բելգիա | Շվեդիա, մասնավոր դոնորներ | Իտալիա | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱԿ ՓԳՅ Հայաստանը երախտապարտ է 2021 թ. հետեւյալ դոնորներին (առ սեպտեմբերի 7-ը).

Հայաստան | Եվրոպական միություն (ECHO) | Ճապոնիա | Ռուսաստանի Դաշնություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ՄԱԿ CERF | GAP Inc. | UPS Corporate